ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԴՈՆԵՌ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/6 ծածկագրով գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացնում եմ «Դոնեռ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) (ՀՎՀՀ 01052798) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

Վարչապետի աշխատակազմի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել «Դոնեռ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 10.10.2023թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանել հրավերի պահանջներին: Մասնավորապես, գնման ընթացակարգի դիմում-հայտարարության մեջ՝

- Ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված,
- Պատվիրատուի անվանումը սխալ է լրացված,
- Չափաբաժինները, որոնց համար հայտ է ներկայացրել մասնակիցը սխալ են լրացված,
- Ռուսերեն անվանումը լրացված չէ,
- 1-ին ենթակետը չի համապատասխանում հրավերի պահանջներին (բացակայում է «իրեն փոխկապակցված անձինք» արտահայտությունը):
- Բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Ինչպես նաև, բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (հրավերի հավելված 1.3), և մատակարարվող ապրանքների տեխնիկական բնութագիրը լրացված չէ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Դոնեռ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետի ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

12.10.2023թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Դոնեռ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, սակայն 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Ըստ այդմ, նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշեց մերժել «Դոնեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի համաձայն: Միաժամանակ, Հանձնաժողովը որոշեց նախաձեռնել ընթացակարգ՝ «Դոնեռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը (...), ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Պատվիրատուն արձանագրում է, որ «Դոնեռ» ՍՊԸ-ն իր կողմից գնման ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը սահմանված ժամկետում չշտկելով՝ խախտել է ***գնման գործընթացի շրջանակում իր կողմից ստանձնված պարտավորությունը,*** որը

հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «Դոնեռ» ՍՊԸ-ին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «Դոնեռ» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ